ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 07 » օգոստոս 2024թ. No 4308 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման EL/01/1210-24 առ 25.07.2024թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 4 դեղի գրանցման հավաստագրերի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի օգոստոսի « 07 » - ի N4302 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Լիզինոպրիլ	լիզինոպրիլ (լիզինոպրիլի դիհիդրատ)	դեղահատեր	10մգ; (20/2x10/) բլիստերում	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	22225 25.07.2024
2	Լիզինոպրիլ	լիզինոպրիլ (լիզինոպրիլի դիհիդրատ)	դեղահատեր	20մգ; (20/2x10/) բլիստերում	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	22226 25.07.2024
3	Մետֆորմին	մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ)	դեղահատեր թաղանթապատ	500մգ; (30/3x10/) բլիստերում	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	22227 25.07.2024
4	Մետֆորմին	մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ)	դեղահատեր թաղանթապատ	1000մգ; (30) ապակե շշիկ	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ռեպլեկ Ֆարմ ՍՊԸ Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Դ	22228 25.07.2024